## ՔԱՂԱՔԱՑԻԱԿԱՆ ԱՎԻԱՑԻԱՅԻ ԿՈՄԻՏԵԻ ՆԱԽԱԳԱՀ

«05» դեկտեմբերի 2022թ.

### ՀՐԱՄԱՆ N 600-Հն

### «ՉԱՐԼԻ ԷՅՐԼԱՅՆՍ» ՍՊ ԸՆԿԵՐՈՒԹՅԱՆԸ («ՍԱՅՓՐՈՒՍ ԷՅՐՎԵՅՍ») ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՏԱՐԱԾՔ, ՏԱՐԱԾՔԻ ՆԵՐՍՈՒՄ ԵՎ ՏԱՐԱԾՔԻՑ ԴՈՒՐՍ ԿԱՆՈՆԱՎՈՐ ԱՌԵՎՏՐԱՅԻՆ ՕԴԱՅԻՆ ՀԱՂՈՐԴԱԿՑՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԻՐԱԿԱՆԱՑՄԱՆ ԹՈՒՅԼՏՎՈՒԹՅՈՒՆ ԵՎ «ՊԵՏԱԿԱՆ ՏՈՒՐՔԻ ՄԱՍԻՆ» ՕՐԵՆՔԻ 29-ՐԴ ՀՈԴՎԱԾԻ 1-ԻՆ ՄԱՍԻ «Ձ» ԿԵՏՈՎ ՆԱԽԱՏԵՍՎԱԾ ԱՐՏՈՆՈՒԹՅՈՒՆ ՏԱԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության կառավարության 2015 թվականի օգոստոսի 6-ի թիվ 1005-Ն որոշման N 1 հավելվածի 19-րդ կետով և հիմք ընդունելով «Չարլի էյրլայնս» ՍՊ ընկերության («Սայփրուս էյրվեյս») 2022 թվականի դեկտեմբերի 2-ի հայտը.

ՀՐԱՄԱՅՈՒՄ ԵՄ՝

1. «Չարլի էյրլայնս» ՍՊ ընկերությանը («Սայփրուս էյրվեյս») (այսուհետ՝ Ընկերություն) տրամադրել Լառնակա/LCLK/-Երևան/UDYZ/-Լառնակա/LCLK/ երթուղով՝ 2023 թվականի հունվարի 26-ից մինչև 2023 թվականի մարտի 23-ը՝ շաբաթական 1 (մեկ) չվերթ հաճախականությամբ Հայաստանի Հանրապետության տարածք, տարածքի ներսում և տարածքից դուրս կանոնավոր առևտրային օդային հաղորդակցությունների իրականացման թույլտվություն:

2. Սահմանել, որ սույն հրամանի 1-ին կետով նախատեսված չվերթները համարվում են Քաղաքացիական ավիացիայի կոմիտեի նախագահի 2022 թվականի օգոստոսի 23-ի N 413-Ա հրամանով տրված թույլտվության շրջանակներում Լառնակա/LCLK/-Երևան/UDYZ/-Լառնակա/LCLK/ երթուղով իրականացվող հավելյալ չվերթներ, որոնց վրա տարածվում է Քաղաքացիական

ավիացիայի կոմիտեի նախագահի 2022 թվականի օգոստոսի 23-ի N 413-Ա հրամանի 2-րդ կետով նախատեսված արտոնությունը:

3. Քաղաքացիական ավիացիայի կոմիտեի օդային փոխադրումների կարգավորման վարչության պետին՝ սահմանված կարգով ապահովել սույն հրամանով նախատեսված թույլտվության հանձնումն Ընկերությանը:

4. Քաղաքացիական ավիացիայի կոմիտեի նախագահի օգնականին՝ սահմանված կարգով ապահովել սույն հրամանի և թույլտվության տեղադրումը Քաղաքացիական ավիացիայի կոմիտեի կայքում:

12/5/2022

X

ՄԻՀՐԱՆ ԽԱՉԱՏՐՅԱՆ

Signed by: KHACHATRYAN MIHRAN 3308540266 ՄԻՀՐԱՆ ԽԱՉԱՏՐՅԱՆ

ԹՈՒՅԼՏՎՈՒԹՅՈՒՆ 209/2022
ՕՏԱՐԵՐԿՐՅԱ ՕԴԱՆԱՎ ՇԱՀԱԳՈՐԾՈՂԻ ԿՈՂՄԻՑ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՏԱՐԱԾՔ, ՏԱՐԱԾՔԻ ՆԵՐՍՈՒՄ ԵՎ ՏԱՐԱԾՔԻՑ ԴՈՒՐՍ ԿԱՆՈՆԱՎՈՐ ԱՌԵՎՏՐԱՅԻՆ ՕԴԱՅԻՆ ՀԱՂՈՐԴԱԿՑՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԻՐԱԿԱՆԱՑՄԱՆ

PERMISSION 209/2022
TO THE FOREIGN AIRCRAFT OPERATOR FOR SCHEDULED AIR SERVICES OPERATION TO, FROM AND WITHIN THE TERRITORY OF THE REPUBLIC OF ARMENIA

| | |
|---|---|
| Օդանավ շահագործողը<br>Aircraft Operator | «Չարլի էյրլայնս» ՍՊԸ («Սայփրուս էյրվեյս»)<br>“Charlie Airlines” LTD (“Cyprus Airways”) |
| Օդանավի (օդանավերի) տիպը (տիպերը)<br>Type(s) of aircraft(s) | A320 |
| Հաճախականությունը<br>Frequency | շաբաթական 1 չվերթ<br>1 flight per week |
| Երթուղին<br>Air route | Լառնակա/LCLK/-Երևան/UDYZ/-Լառնակա/LCLK/<br>Larnaca/LCLK/-Yerevan/UDYZ/-Larnaca/LCLK/ |
| Թույլտվության գործողության ժամկետը<br>Permission validity | 26/01/2023 մինչև 23/03/2023<br>26/01/2023 till 23/03/2023 |

ՔԱՂԱՔԱՑԻԱԿԱՆ
ԱՎԻԱՑԻԱՅԻ ԿՈՄԻՏԵԻ
ՆԱԽԱԳԱՀ
ՄԻՀՐԱՆ ԽԱՉԱՏՐՅԱՆ
CHAIR OF THE
CIVIL AVIATION COMMITTEE
MIHRAN KHACHATRYAN

12/5/2022

X

ՄԻՀՐԱՆ ԽԱՉԱՏՐՅԱՆ

Signed by: KHACHATRYAN MIHRAN 3308540266

ԷԼԵԿՏՐՈՆԱՅԻՆ ՍՏՈՐԱԳՐՈՒԹՅՈՒՆԸ ՎԱՎԵՐ Է
ELECTRONIC SIGNATURE IS VALID

05.12.2022
(տալու ամսաթիվը)
(date of issue)